



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2007թ.

N 16

ք.Ստեփանակերտ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ` ԳՈՅԱՑՄԱՆ, ՀԵՌԱՑՄԱՆ (ՈՉՆՉԱՑՄԱՆ, ՎՆԱՍԱՋԵՐԾՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ) ԵՎ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել թափոնների հաշվառման` գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ԿԱՐԳ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ՝ ԳՈՅԱՑՄԱՆ, ՀԵՌԱՑՄԱՆ (ՈՋՆՉԱՑՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ) ԵՎ ՕԳՏԱՅԱՆՄԱՆ

#### Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման (այսուհետ՝ թափոնների հաշվառում) հետ կապված հարաբերությունները:

2. Թափոնների հաշվառումը թափոնների քանակական և որակական ցուցանիշների, ինչպես նաև դրանց գործածության մասին տեղեկատվության անընդհատ փաստաթղթային արտացոլման համակարգ է:

3. Թափոնների հաշվառման կարգը տարածվում է թափոնների գործածության ոլորտում ներգրավված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա (այսուհետ՝ կազմակերպություններ), որոնք պարտավոր են սույն կարգով իրականացնել գոյացող, օգտագործվող, հեռացվող՝ ոչնչացվող, վնասազերծվող, տեղադրվող, ինչպես նաև այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող թափոնների սկզբնական հաշվառում:

4. Թափոնների հաշվառումն իրականացվում է թափոնների և երկրորդային հումքի գոյացման ծավալների ու տեսակների որոշման, թափոնների գործածության գործողությունների ժամանակին ու հավաստի փաստաթղթային արտացոլման, «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև N 1-թափոն (տարեկան)» վարչական վիճակագրական հաշվետվության համար տվյալների ձևավորման, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության կանխարգելման նպատակով:

5. Թափոնների հաշվառման համակարգը ներառում է՝

- ա) թափոնների սկզբնական հաշվառման վարումը դրանց գոյացման տեղերում,
- բ) թափոնների միասնական հաշվառման վարումը կազմակերպություններում,
- գ) թափոնների գույքագրումը:

6. Թափոնների սկզբնական հաշվառումն իրականացվում է՝ թափոնների գոյացման փաստացի ծավալի հիման վրա:

7. Թափոնների միասնական հաշվառումը թափոնների ընդհանուր հաշվառումն է կազմակերպությունում: Այն իրականացվում է թափոնների սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա:

8. Թափոնների գույքագրումն անցկացվում է առնվազն տարեկան մեկ անգամ՝ թափոնների քանակական և որակական ցուցանիշների որոշման նպատակով:

9. Կազմակերպության ղեկավարը սահմանում է թափոնների սկզբնական հաշվառման և թափոնների միասնական հաշվառման իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձանց ցանկը:

## II. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՐ

10. Թափոնների գոյացումն արտացոլվում է թափոնների սկզբնական հաշվառման գրքում:

11. Թափոնների միասնական հաշվառումը կազմակերպությունում արտացոլվում է թափոնների ընդհանուր հաշվառման գրքում:

12. Թափոնների ընդհանուր հաշվառման գիրքը վարվում է թափոնների սկզբնական հաշվառման գրքի տվյալների հիման վրա, լրացվում է յուրաքանչյուր ամիս և մինչև գրառումներ կատարելն այն համարակալվում է՝ վերջում նշելով էջերի թիվը, կարվում, կնքվում ու ստորագրվում է ղեկավարի կողմից և պահվում 5 տարի ժամկետով:

Թափոնների սկզբնական հաշվառման գիրքն ու թափոնների ընդհանուր հաշվառման գիրքը պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

- ա) թափոնների գոյացման նորմատիվը,
- բ) թափոնների անվանումներն ու ծածկագրերը,
- գ) թափոնների վտանգավորության դասը,
- դ) տեխնոլոգիական պրոցեսը կամ արտադրությունը, որտեղ գոյացել է թափոնների տվյալ տեսակը,
- ե) գոյացած թափոնների քանակը,
- զ) այլ կազմակերպություններից ստացված թափոնների քանակը,
- է) այլ կազմակերպություններին փոխանցված թափոնների քանակը,
- ը) օգտագործված թափոնների քանակը,
- թ) վնասազերծված, ոչնչացված թափոնների քանակը,
- ժ) թափոնակուտակիչներ տեղափոխված թափոնների քանակը,
- ժա) տարեսկզբին առկա թափոնների քանակը կազմակերպությունում,
- ժբ) տարեվերջին առկա թափոնների քանակը կազմակերպությունում,
- ժգ) թափոնների ֆիզիկաքիմիական բնութագրերը (ազրեգատային վիճակը (հեղուկ, պինդ), հիմնական բաղադրիչների պարունակությունը):

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ